«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № __197 § 15___ _14__ ___12____ 2024թ.

ՀՀ. ք. Իջևան 4001 Ուսանողական 3
Քաղվածք

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ.Վ.Հովհաննիսյանի 2024թ.-ի դեկտեմբերի 11-ի № 239/15-Լ հրամանը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կանոնադրության 32-րդ կետի 15-րդ ենթակետով՝

Հրամայում եմ.

1. 2023թ. ԵՊՀ ԻՄ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողներին վճարել տարեվերջյան դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) 2024 թվականի սեպտեմբեր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը:
2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2024 թվականի ընթացքում վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին և սույն հրամանի ստորագրման օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:
3. ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել սկսած 2024 թ. դեկտեմբերի 14-ից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝ ԱԿԻՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Ն. Ժ ԱԲԱՋՅԱՆ